Թիւ 393 Ը. ՇՐՋԱՆ ԵՐԵՔՇԱԲԹԻ 1877 ԴԵԿՏԵՄԲԵՐ 13

ՀԱՅՐԵՆԻՔ

Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

Մայրաքաղաքիս մէջ հրատարակեալ Սթամպուլ գաղիւախօս թերթը զինուորագրութեան մասին Համադումար ժողովոյ տուած որոշումը քննադատելով, Հայ եկեղեցականութեան և Հայ ժողովրդեան խել մը նախատինքներ ուղղած է ուրբաթ աւուր թուով որ ամէն ընթերցող Հայու նողկանք պղտեցին։

Առոր պատասխանը տալ եկեղեցական Հարց թողլով, կը զարմանամք թէ Սթամպուլի անգղիացի խմբագիրը առանց Հայ կղերին նկարագիրն ու ընթացքը ի մօտոյ ուսանելու ինչպէս կը համարձակի զայն անարգ, ամբարիշտ և այլն կոչելու. նոյնպէս կը զարմանամք թէ միևնոյն թերթը առանց Հայ ազգին քաղաքականութիւնը գիտնալու, առանց նորա՝ Օսմանեան տէրութեան և ժողովրդեան հետ հինգ դարէ ի վեր ունեցած անյայտելի ներդաշնակութեան վրայ գաղափար մը ունենալու, զայն պարտաբոյժ, կեղծաւոր և խաբեբայ անուանելու կը յանդգնի։ Եւ ո՞վ է Սթամպուլի խմբագիրը. — օտարական մը որ իր մէկ կամ երկու տարուան Պօլսոյ մէջ բնակութեամբը մանաւանդ հատի չափ ձայն չկրնար ունենալ Հայոց ազգին իր բարեխնամ կառավարութեան հետ ունեցած յարաբերութեանց և պարզ քաղաքականութեան վրայ։

Բանիրաւի և յախուռն կերպով Ազգի մը պատուոյն վնասելը անհատի մը պատուոյն վնասելէն չատ մեծ նշանակութիւն ունի։ Ուստի երբ յիշեալ խմբագիրը Եւրոպայէն Պօլիս գալով քանի մը ամիս ունեցած կեանքովը Հայոց ազգը անպատուելու կելնէ ղայն նախատելով և թշնամանելով առանց խնդիրն ի հիմանէ քննելու և իբրև խմբագիր լուրջ և հաստատ կերպով խորհրդածելու, մեք ևս իրաւունք ունինք ըսելու թէ Սթամպուլ թերթին խմբագիրը Եւրոպայի մէջ հայ չկրնալով գտնել, Պօլիս եկած է իր ապրուստը ճարելու բաղդախնդրի դոյնին ներքև։

Սա ևս պէտք է գիտնայ յիշեալ խմբագիրը որ ինքը այս երկրին մէջ օտարական մ'է. հետևաբար իրաւունք չունի օսմ. Տէրութեան և Հայոց ազգին յարաբերութեան վրայ մաղիւ չափ քննադատութիւն քննելու. Հայոց ազգը Օսմ. երկրին և ժողովրդին հետ միացեալ և իր հաւատարմութեամբ ու անձնուիրութեամբը անբաժան ժողովուրդ մ'է որում կը վկայեն օգոստափառ Սուլթանաց հրովարտակները։ Սա ևս պէտք է գիտնայ յիշեալ Պարոնը որ Հայկական կղերը ուրիշ կղերաց նման ժէղուիթական դարձուածքներ չունի և չկըրնար ունենալ, ղի Հայաստանեայց եկեղեցին ղայդ ամենայն կը խոտէ և կը մերժէ։

Ուստի Հայկական մամուլը ի դիմաց Ազգին կը հերքէ և կը մերժէ բառ առ բառ Հայոց ազգին վերագրեալ ամեն անհաւատարմութեան կասկած, ատելութիւն և չարամտութիւն և կը յայտարարէ թէ այդ ամէն հրատարակութիւնք թշնամական ոգւոյ արդիւնք են և թէ Հայոց ազգը իւր բարեխնամ կառավարութեան արդար որոշմանց հպատակելու պատրաստ է այսօր և յաւիտեան։

Կարնոյ Ցարութիւն Սրբազանի վրայօք վերջին օրերս ցաւալի լուրեր հրատարակուեցան ժողովրդեան մէջ. Նորին Սրբազնութենէն հեռագիր մը հասած է յԱզգ. Պատրիարքարան, որ բոլորովին սուտ ըլլալը կը հաստատէ նոյն տարաձայնութեանց. ուստի անոր պատճէնը ներկայիս կը հրատարակեմք ի փարատումն նոյն սուտ տարաձայնութեանց։

« Տէրսաատեթտէ Էրմէնի բաթրիգլի-
« կինէ։ Ան Էրզրում

« Մէհաճիրլին իչիւն կէօնտերիլէն բօ-
« լիչա վիսուլ պուլտու. վիճուտճէ սաղ
« սէլիմիզ։» Մերխասայի Էրմէնիան

11 դեկտ. 77 Բարութեան եպիսկոպոս

— Համագումար ժողովոյ կողմանէ կարգեալ Մասնախօսութիւնը և կրօնական և քաղաքական ժողովոյ Ատենապետները համագումար ժողովոյ գինուորագրութեան մասին տուած որոշման վրայ խորհրդակցելու համար Ս. Պատրիարք Հօր տունը հրաւիրուած են այսօր։

— Նոր Դար լրագիրը գինուորագրութեան խնդրոյն վրայ գրած յօդուածոյ պատճառաւ Տպագրական տեսչութեան կողմանէ առանց պայմանաժամի դադարման ենթարկեցաւ։

ԴՊՐՈՑ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Խգ.

Ա՜ Օր. Աղ՜ոյ Ս. Կի՜ւլէճեան
Ուսանողուհի Ս. Լուսաւորչեան վարժարանի
ի Գում-գաբու

Համեստափայլ Քոյր,

Ցումպէտս ինձ չհայլուած ներքողեբուն վրայ Դուք ևս կուգաք յաւելուլ Հայրենեաց 391 թուոյն մէջ մի այնպիսի մեծափառ նամակաւ որ ինձ աւելի չառագնելու ծառայէ և ոչ այլ իրիք։

Չի կրցայ վերջապէս՝ համոզուիլ թէ իմ գրածներն ի՞նչ հրապոյր ունին, որով Դուք ևս հրապուրուեր էք և մինչև զձեզ գրական ասպարէզ մղելու տեղի տուեր են։

Ես մէկ բան միայն տեսնեմ իմ գերուածոյ մէջ, այն է՝ իմ մտոք ժողովրդեան ուղղակի վերաց վրայ դնելը, իմ ուշադրութիւնը դէպ ի մեր քնտանեկան կենաց վրայ դարձնելը։

Անկարող՝ բաւական բառ գտնելու Ձեր վսեմ նպատակին վրայ իմ բերկրութիւնը յայտնելու համար, զայս և եթ կարեմ ասել թէ այն վեհ զգացումներն որով պճներ և փայլ ի փայլ զարդարեր էք Ձեր սքանչելի գրութիւնը, նոքա արդէն սուրբ գրաւական մ'են այն դաստիարակութեան զոր տուած են Ձեզ ձեր մայրը, ձեր հայրը ձեր մանկութեան օրերուն վերև. նոքա ակն յայտնի առհաւատչեայ են այն սուրբ դաստիարակութեան զոր ստացել էք ձեր ընտանեկան կենաց մէջ. նոքա կենդանի ապացոյց մ'են այն դաստիարակութեան՝ զոր առել էք գիտութեան արարչապետ տաճարին մէջ, ձեր դպրոցի այն սուրբ յարկին ներքև շնորհիւ ձեր դաստիարակներուն ձեր ուսուցիչներուն և մանաւանդ ձեր արժանայարգ տեսուչ Տէր Հօր։

Ձեր վսեմ գրութիւն ոչ միս այնքան սքանչացայ, որչափ սա հետևեալ տողերըն։

« Ագահն՝ ոչ այնչափ խանդաղատանօք փայլուն ոսկին և շողշողուն արծաթին որոնէ, ոչ հարուստն իւր հոյակապ և մեծակառոյց ապարանին ոսկեհուռ դահարակներուն փարի և ոչ իսկ գիչերոյ խոնաւութենէն հիւծ և թարշամ՝ վարդն՝ ոսկեճաճանչ արփւոյն կենսատու նշուլից այնչափ ըղձայ, որչափ մեք փափաքիմք այն գրութեանց՝ որ մարդեր չինէ, կեանք

Խմբագրական հասցեն՝ Պետրոսյան 4, հեռ. 56-42-42
Տպագրված է «Ասողիկ» տպարանում
Պատվեր՝ 1370 Տպաքանակ՝ 8000

Ինչպես ենք մենք ապրում

Ինչպես ամեն տարի, այնպես էլ այս տարի մենք ենք ուզում իմանալ, թե ինչպես ենք մենք ապրում։ Ինչպես ենք մենք ապրում, ինչպես ենք մենք ապրում, ինչպես ենք մենք ապրում։

բարձրացած են, Հայու հնօրեայ սովորույթը, միշտ հաշտ երկնից հետ, անմռունջ կը տանի ամեն չարչարանաց։ Այո՛, ցուպը ձեռքին, մաղոտ կուրծքը կէս բաց, պատռտած բաճկոնին մնացած կոճակները փակած, կարճ ալլեան կամ կամ կէս ֆալէֆն իր բուրդ ըլլալին վրայէն հագած և մի հատ գօտի մէջքը փաթթած, բայց գլխիկոր, վիզը ծռած՝ կարավանի առաջը ընկած կը քալէ, կամ սայլակը կամ ձին կը քշէ, որոյ վրայ նստեցրած է իր խեղճ երեխայքն ու կինը։ Ո՛հ, երեխաները, բոկոտն, գլխիբաց, մի միայն մէկ հատիկ շապիկ վրան գցած, որոյ թեւերը չկան, երեխաները ջոլջոլէն մերկ, թէպէտ կայտառ և առողջ, բայց արտասուալից աչօք, բայց մօրը քղանցքէն բռնած, ետ դարձած կը նայի, ո՛ գիտէ թէ ի՛նչ կ՚ուզէ այն խեղճ մօրմէն, որ իւր ձեռքէն բռնած է, մինչդեռ մի փոքրագոյնն ալ գիրկն առած կը քալէ։ Անշուշտ քաղցած է նա, մօտէն անցնող Ռուս ճանապարհորդներու դէմ ձեռքն երկնցուցած հաց կամ պուտ ստանալու. խե՛ղճ նաղլու, էլմաս կամ վարդուհի՝ ցնցոտիներու մէջ փաթթուած, ձագուկը գրկած, նստած է մի անկիւնում. բայց, ո՛հ, այդ ի՛նչ տխուր . . . տխուր և տխուր դէմք է, բայց ո՛րպէս պինդ կապած է իր քթկալը կամ բերնկապը, Հայաստանի Հայ կնոջ պարկեշտութեան այդ սրբազան դրօշմը, նոյնչափ սրբազան նորա համար, որչափ սուրբ միւռոնը։ Խեղճ աղջիկ, հազիւ տասնամեայ է, էլոսպոդէ պէս հեքեաթ և թուխ մազերը ցրուած, կէս կօշիկով, մի փոքրիկ դդակ գլխին, յոդնած, դադրած բայց անշուշտ դարձեալ քաղցած որ դէպ ի մօտէն անցնող կառքին կը վազէ իր՝ բայց աւելի իր փոքրիկ եղբօր քաղցը յագեցնելու համար մի բան ստանալու յուսով։ Այդ բոլոր խեղճ և ցնցոտիներ հագած կամ կիսամերկ անձնաւորութեանց մէջ մէկ հատիկ բացառութիւն միայն կ՚երեւի, գուցէ մի քիչ ունեւոր և բարեբաղդ անձն։ Մի աղջիկ, արեւելեանց ճոխութեամբ թամբած և սարքած մի ձիու նստած է գիւղաղնուհւոյ մը պէս, երկար ու սեւ մազերը մինչ ի կէս մէջքը ցրուած, քօղը գլխին, բայց դէմքը բաց և ճակատին (գուցէ մի քաղաքացի աղջիկ) իր հանապազօրեայ զարդը, ոսկի կամ արծաթ դրամներ չարած և ինչպէս կ՚երեւի իր հագուստն ասիական վառ երեւակայութեամբ բանած նախշուն ասղնագործութիւններով զարդարած է, որ իւր կլոր ու անոյշ դէմքը զարդարող փոքրիկ բերնին ու սուր քթին հետ միանալով, մի դիմագիծի իսկոյն կը մատնեն նորա Հայկուհի լինելը, վասն զի իր խոշոր ու սեւ աչերուն նուաղկոտ նայուածքը, խիտ ու սեւ յօնքերուն ու թարթիչներուն հետ, ամեն բան կը լրացնեն և նորա Հայ լինելուն վրայ ամեն տարակոյս կը փարատեն . . . Բայց . . . թողում այս տխուր առասպելը, որոյ նկատողութեան փորձն ընելու չեմ համարձակիր, թողում այս պատկերը, որոյ նմանը մի ուրիշ Հիւսիսկարթուհի հրատարակուող «Ճանկեռազարդ աշխարհ» անուն թերթին մէջ նկարած է «Փախստական Ցանկա-Հայեր Արավալէն Երեւան գնացող ճանապարհն վերայ» վերնագրով։ Գրեթէ ճիշդ մի և նոյն պատկերն է և այս, մի և նոյն դէմքերն ու երեւոյթները կը տեսնուին և այս պատկերին վերայ, մի և նոյն տխուր և խեղճ արտրածները, միայն սա տարբերութեամբ որ այս վերջին թերթը հետեւեալ խօսքերը կը յաւելու։

«Մեր ընթերցողաց կը ներկայացնենք այս համարուամ՝ պատերազմի Ասիական դաշտէն մի պատկեր։ Այս տարաբաղդները նախանձելի են դեռ, որովհետեւ կարող են փախչիլ. սոքա դեռ մի բան ունին, որ արժէ ապահովել, իրենց կեանքը դեռ մի արժէք ունի իրենց աչքում, այս պատճառաւ յուսահատ և անզգայ՝ իրենց անողորմ ճակատագրին չեն հնազանդիր։ Հայերն ընդհանրապէս մի դեղեցիկ ցեղ կը կազմեն, որոյ արեւելեան ճոխ տարազն սքանչելի կերպով նստում է։ Ամբողջ Հայաստանի արեւմտեան երկու երրորդ մասն Թուրքաց իշխանութեան հպատակ է, որու կը պատկանին և մեր վիճաստականները։ Հայաստանն արգասաբեր և խիստ գեղեցիկ երկիր մ՚է. բնակիչները (Հայերը) հանճարեղ և խորամանկ, բանիբուն վաճառականներ, որք հասկցած են, բաւական նշանաւոր գումարներու տիրանալ, բայց ներկայ պատերազմին պատճառաւ դառնապէս վնասուած են»։

ԿԱՂԱՔԱԿԱՆ

Թէև Բումէլիի մէջ մշուշը և ձիւնը պատած ըլլալով, պալքանաց մէջ զինուորական դործողութիւնք առ այժմ դադրած են, սակայն Հայաստանի մէջ գեղեցիկ օդ մը կընէ և թշնամւոյն կարնոյ վրայ քալելուն արգելք չը լինիր։

Շաբաթ օր Հասան գալէէն եկող ռուսական, վաշտ մը դաշտավայրին մէջ եւևնալով, փոքր կռիւ մը տեղի ունեցեր է։ Թշնամին չորս գիւղի տիրեր է։ Նիրակի առաւօտ խաղաղները դաշտավայրին դէպ ի հիւսիսային արեւելեան կողմը բարերդի ճամբուն ուղղութեամբը հետապօտութիւն մը ետ մղեր են և մեծ զօրութիւն մը իրենց յառաջ խաղալուն կօգնէր։

Լէվանթ կըսէ թէ մեր զօրաց ցուցցած ընդդիմութեան արդիւնքը ի՛նչ ըլլալը յայտնի չէ, սակայն կըսեն թէ Նուսրէթ Ալի փաշա վիրաւորուեր է։ Հասան Գալէէն եկող և դաշտավայրին մէջ երեւցող զօրաց չատութեանը նայելով կերեւի որ թշնամին օդին գեղեցկութենէն օգուտ քաղելով կարնոյ վրայ պիտի յարձակի։

Բլէվնայի անկումը լսելուն պէս օսմանեան զօրքերը Էլէնա քաղաքը և Մարիեան գիւղաքաղաքը այրեր և թողեր են։ Իսկ իրենք ուրիշ դիրքերու մէջ քաշուեր են։

Ժամանակէ մը ի վեր Շիբքայի կիրճին վրայ չը խօսուիր. բայց վէյսէլ փաշա 21 թուով կը հեռագրէ թէ ղինուորական կարեւոր դէպք մը չկայ բաց ի օդին խըստութենէն որուն օսմանեան յառաջապահ զօրքերը մեծ դժուարութիւն կը կրեն հանդուրժելու համար։

Շէհր-քէօյի (փիրօթ) կառավարիչ Սալիհ էֆէնտի 20, 21 և 22 թիւերով կը հեռագրէ թէ քանի մը փոքր կռիւներ տեղի ունեցեր են, որք օսմանեանց նպաստաւոր են։

—

Հաշտութեան բանակցութեանց ուղի մը բանալու նպատակաւ Բ. Դրնէն եւրոպական տէրութեանց ուղղեալ շրջաբերականին դեռ պատասխան տրուած չէ Անգղիոյ կառավարութենէն։

Իսկ Աւստրիոյ այս մասին բռնելիք քաղաքականութիւնը հետեւեալ հեռադիրը ղոր Լէվանթ ընդունած է, որոշակի կը պարզէ։

«Անտրասի կոմսը կամ պէտք է քաղաքականութիւնը փոխէ կամ ետ քաշուի. և ասոր պատճառն ալ կայսեր հետ ունեցած մէկ վիճաբանութիւնն է եղեր յորում կայսրը զԱնտրասի յանդիմաներ է Աւստրիան Գերմանիոյ և Ռուսիոյ հետ կապող քաղաքականութեան մը հետեւած ըլլալուն համար։

Այսպէս կայսրը իր կառավարութեան ներկայ քաղաքականութեան մասին գոհոհութիւն յայտնելով փափաք յայտներ է որ Աւստրօ-Հունգարիոյ շահերը Ռուսօ-Գերմանիոյ կապակցութենէն կարելի եղածին չափ շուտով բաժանուին։

—Զարը Պուքրէշ մեկներ է կօրչագօճի և կայսերական տան հետ Ս. փեթրըսպուրկ վերադառնալու համար։

—Բլէվնայի անկումէն վերջը կայսրը, նիքօլա գումսը Բլէվնա մտնելով «զքեզ գովաբանեմք» աղօթքն երգեր են։

Պելկրատէն դեկտ. 9 թուականաւ հետեւեալը կը գրեն վիէննայի լրագրաց։

«Պաշտօնէից ժողովը որոշեց որ գործօն բանակը կազմակերպելուն պէս պահեստի զօրքերը զէնքի ներքև կոչուին։ Պատերազմի մտնելու պատրաստ եղող Սերվիական զօրաց թիւը երեք չաբաթ վերջը 125,000 հոգիէ պիտի ելնէ 49 դաշտային թնդանօթով։

«Բոլոր զինարաններուն մէջ զէնք, պատերազմական մթերք և այլ գործիքներ մթերեցան։»

— Վիտինէն ալ Մօրնինկ Ատվերթայզերի թղթակիցը հետեւեալը կը դրէ.

«Սերվիական սահմանագլուխը օսմ. յառաջապահ գիծերէն հասած տեղեկութեանց նայելով, Սերվիա ծայրի սահմանագլուխը երեք զօրաբանակ համախմբեր է, որոց ամբողջ թիւը 60000 ի կելնէ։

«Այս զօրաբանակաց մէկուն ընդհանուր բանակակեդրոնը Նէկօթին է. երկրորդը Վէլիք Իզվօրի և անոր շրջակայից մէջ ամրացեալ է։ Երրորդը Սիւբօվացի մէջ կը գտնուի։ Այս վերջին զօրաբանակը 25000 հոգիէ կը բաղկանայ որ Շաքիր փաշայի դէմ կուրքօ զօրավարին գործողութեանց պիտի օգնէ Բիւրդի վրայ։ Բոլոր օսմ. զօրութիւնք հոս խմբուեցան սերվիացւոց արշաւանքն արգիլելու համար։»

Աթէնքի լրագիրները հետեւեալ հեռագիրները կը հրատարակեն։

Վիէննա 13 դեկտ. — Անգղիա հրաւիրելով զիտալիա որ իրեն հետ միանալով Թուրքիոյ ամբողջութիւնը պաշտպանէ, իտալիա Գերմանիոյ համաձայն ընթացք մը բռնել աւելի նախամեծար համարեր է։

Զիչթովէն Բրէսթ Թերթին ուղղեալ հեռագիր մը կըսէ Թէ Բլէվնայի օսմանեան զօրքերը հրացաններն Ռուսաց չը յանձնելու համար զէնքերը կոտրտեր են։

Թիֆլիզ 15 դեկտ. — Տէր-Ղուկասօֆի բանակին և օսմանցիներու մէջ Զայլագ և Ինկեարուզ տեղերուն մօտ սաստիկ կռիւ մ'ըլլալով, Օսմանցիք Ռուսաց չատութեան չկրցին դիմանալ և ետ քաշուեցան։ Տաճկաց նպատակն էր կարին երթալու համար ճամբայ մը բանալ, բայց Տէր-Ղուկասօֆի զօրախումբը չկրցաւ տաճիկները հալածել։

Ռուսաց թնդանօթները Պաթումի երկրորդ գծին ամրութիւնները ամրակոծելու վրայ են։

Պէլկրատ 15 դեկտ. — Սերվիական զօրքերը երեք տեղէ սահմաններէն դուրս պիտի յարձակին. Միլան իշխանը որ բարոյին կը գտնուի, Թիմօքի բանակին հետ պիտի երթայ։

Պուքրէշ 15 դեկտ. — Կը հաւաստեն Թէ Ռուսիոյ և Տանիմարքայի կառավարութեանց մէջ բանակցութիւնք կը շարունակեն Տանիմարքայի իշխաններէն մէկը Պուլղարիոյ Թագաւոր դնելու համար։

Պէլկրատ 15 դեկտ. — Սերվիոյ բոլոր կողմերը պաշարման վիճակ հրատարակուեցաւ։ Հօրվաթօվիչ զօրապետը գլխաւոր բանակաւը սահմանագլուխն անցաւ.

Լոնտրա 15 դեկտ. — Զինադադար մը կնքելու համար միջամտութիւն մ'եղաւ. սակայն Գերմանիոյ և Ռուսիոյ ընդդիմութեան վրայ ի դերև եղաւ։

Պուքրէշ 17 դեկտ. — Կորչաքօֆ իշխանը իւր մէկ ծանուցագրին մէջ կըսէ Թէ հաշտութեան վերաբերեալ զրոյցները ցնորք են։

Բարիզէն գրուած նամակ մը կըսէ Թէ իտալիա երեք պատերազմական նաւ ծախեր է Ցունաստանի և Թէ երկուքին մէջ բանակցութիւնք կըլլան, յորում պիղմարքի մասը կերեւի եղեր. պի սա Զարին և Սուլթանին մէջ ուղղակի հաշտութիւն մը կնքելուն վրայ պնդելով կաչխատի եղեր որ իտալիոյ և Ցունաստանի դաշնակցութեամբը նոր տագնապ մը գայ Բ. Դրան գլուխը։ Անգղիա որ զայս ամենը կը տեսնէ և դիտէ, տակաւին միջոց մը ձեռք առած չէ արգիլելու համար։

Ֆիւրքճիւ էսնաֆքնատ Մէհէմմէտ Շեվքեթ վէ չիւրէքլասը Արիֆ Իսմայիլ վէ Աւետիս Զագարեանքն իֆլասլարընա հիւքմ օլունարագ, մէսալհի իֆլասյէլէրինին րուհյէթինէ Ֆէրհար վէ Իսթավրաքի էֆէնտիլէր մուվագդաթէն սինտիք Թային պուլրուլմուշ օլտուգլարընան, միւֆլիւսանը մէրգուման զիմմէթինէ ալաճաղը օլանլարընն գանծնը Թիճարէթին 170 ինճի մատտէսինէ Թէվֆըքէն, մէրգուման մուվագդաթ սինտիքլէրին ասալէթէ Թահվիլի վէ եախօտ եէնիտէն իսթիխսամը լճապ իտէն վէքիլլէրին Թայինի զըմնընտա միւզաքէրէ օլունմագ իւզրէ, իշպու 1293 սէնէսի քեանունի էվվէլինին 19 ընէ Թէսսալունիքէ իտէն բաղար էրթէսի կիւնիւ սաաթ 7 տէ տէօրտիւնճիւ մահքէմէի Թիճարէթին ժիւժ գօմիսէրլէրէ մախսուս օտաեէ կէլմէլէրի։

ՕՐԱՑՈՑՑ ՊԱՐՋ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ
1878
ԹՈՒԱԿԱՆԻՆ ՓՐԻՍՏՈՍԻ
Ծննդեամբ
Յերեմիա Քահանայէ Խասգիւղի
Պարուներակութիւն ընդարձակին

Օրացոյց պարզ.

Աղբ. Հոդեւոր գլուխ, և ընդհ. ժողովք.

Աղբ. վարչութիւն կրօնական՝ և քաղ. ժողովք։

Աղբ. զանազան ժողովք. խորհուրդք, և հոգաբարձութիւնք.

Եկեղեցն օսմանեան Տէրութեան.

Օսմանեան կայսր և կայսերազունք.

Բարձրաստիճան նախարարք Տէրութեան.

Հայազդի պաշտօնատարք ի Բ. Դուռն.

Թիւ մարդկան ընդ ամենայն երեսս երկրի.

Թիւ աղգիս Հայոց.

Արժէք դրամոց զանազան աղդաց.

Մշանջենաւոր աղիւսակ գիւտի աւուր ամսամտի.

Համեմատութիւն Եւրոպիոյ և Տաճկաստանի ժամուց և րոպէից։

Կը ծախուի բոլոր գրավաճառաց քովՊարզ 60 փր. Ընդարձակ 3 ղ։

ՍՈԿՐԱՏԻ ՈԳԻՆ
ՐՕՍԻ ՏՐ ՁԻՒՕԹԻՆԵԱՆԻ

Ոդեկանութեան (սբէրիթիզմ) վրայ գրուած սոյն կարևոր գործը որ Պ. Ց. Սվաճեանէ Թարգմանուած և իզմիրի Աբեղա Աբօթաեանի տպարանէն ի լոյս ընծայուած է, նոյնպէս կը ծախուի եէնիճամի Զիլինկիրլէր-ճատտէսի, Թիւ 2, Ս. Ղ. և եազմաճեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գինն 25 սանթիմ։

ԽՈՐՀՐԴԱԻՈՐ ԿՂԶԻ
ԸՆՆԿԵՑԻԿ ՄԱՐԴԸ

Ժիւլ Վէրն անունի հեղինակին սոյն հետաքրքրաշարժ և հրահանգիչ գործին երկրորդ հատորն ալ իզմիրէն հասած ըլլալով, կը ծախուի եէնի-ճամի, Զիլինկիրլէր-ճատտէսի, Թիւ 2, Ս. Ղ. և եազմաճեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գինն 2 ֆրանք։

ԹՈՐՈՄ ԼԵԻՈՆԻ
Գրեց Մեբէնց

Սոյն գեղեցկահիւս վիպասանութենէն՝ որոյ պատմական աղբիւրը Ռուբինեան հարստութենէն առնուած է, և որ Քըրիստոսի 1145 Թուականին Հայոց Կիլիկիոյ մէջ վերստին ձեռք բերած իշխանական մեծութեան ճշդրտատիպ պատկերն է, ամեն հայ պէտք է վուրթայ մի օրինակ ունենալ։

կը ծախուի ամեն հայ գրավաճառաց քով։ Գինն 2 ֆրանք։

ԹԵՍԱԼՈՐՈՍԻ
ԲԱՐՈՅԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Այս պատուական գիրքը այս անգամ չնորհիւ գեր. Խորէն Եպիսկոպոսի Մխիթարեան գրաբարէն համառօտութեամբ աշխարհաբարի Թարգմանուելով իզմիրի Տէտէեան Եղբարց տպարանէն ի լոյս ընծայեցաւ մաքուր տպագրութեամբ, Յուսալի է որ այս անմահ գործը մեծ ընդունելութիւն պիտի գտնէ ազգային վարժարաններէն և ընթերցասէր հասարակութենէն։

Գիրքը կազմեալ 316 երեսէ բաղկացած ըլլալով կը վաճառի եէնի-ճամի Զիլինկիրլէր ճատտէսի Թիւ 2 Ս. Ղ. և եազմաճեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 3 ֆրանք

ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՆԴԻՍԻ
ԱՐԱՐՁԱԳՈՐԾՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ
Ցեղ ի գրաւոր բան
Պօղոս Գ. Քեբէօփեան
ԳՈՐԾ ԱՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Տպագրութիւն Աբամեան
1878

Սոյն դուշնաքեայ երկասիրութիւնք՝ որ 32 երեսէ կը բաղկանայ՝ նիւթոյն աղնուութեանը գրաբառ սահուն ոճոյն և աղգի աղգի գողտրիկ իմաստիցն համար՝ կաղանդի նուէր և Մրցանակաբաշխեան համար մէկ հատիկ արժանաւոր պարգև համարուած և արդէն սպառած է։

Այս անգամ Ն. Բարձրաչնորհ Սրբազնութեան անուան պաշտպանութեամբն հովանաւորեալ, Աբամեան մաքուր տպագրութեամբ և աւելի գեղեցիկ դիրքով՝ Թարգմանչէն խնամով ուղղեալ և ինչ ինչ ի կարևորաց յաւելեալ ի լոյս կընծայուի Ասիական բարենախանձ ընկերութենէն նորահաս ուսանողաց համար, այնու քաղցր ակնկալութեամբ որ անշուշտ սոյն Բ. տիպն ալ առաջնոյն բախտին պիտի արժանանայ, հայկական գրաւոր լեզուին վսեմութեանը վրայ ճաշակ ունեցող նորատի ուսանողներէն։

Գինն է 3 գահեկան ողջ Թղթադրամ։

Դպրոցաց կաղանդի նուէրի համար մասնաւոր զեղչ կըլլայ։

Կեդրոնատեղին է դրատուն փարիզու Զագմագ ճըլար եօղուշու Յակոբեան խան Թիւ 13։

Կը ծախուի բոլոր դրավաճառաց քով։

ՊԱՅՄԱՆԻՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ
Հայրենիք երեքշաբթի և չարաթ օրերը կը հրատարակուի։
Տարեկան բաժանորդագինն է մէկ հարիւրնոց Թուղթ կանխիկ։
Վեցամսեայն մէկ յիսուննոց։
Եռամսեայն մէկ քսաննոց և տասնոց։
Միամսեայն մէկ տասնոց։
Յանուցման տողը երկու ղրուշ է։
Եմբագրութեան ուղղեալ նամակ կամ գիր ետ չը տրուիր։
Լրագրոյս վերաբերեալ ո և է գիր պէտք է ուղղել առ Տէր-Խմբագիր Մ. Ց. Մելիքեան Բիզա բաշա խան Թիւ 1։
ՏԷՐ-ԽՄԲԱԳԻՐ
Մ. Ց ՄԵԼԻՔԵԱՆ